ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը.

1) Ք. ա. 68 թ.
2) Ք. ա. 31 թ.
3) Ք. ա. 93 թ.
4) Ք. ա. 331 թ.

2 Ե՞րբ է գահակալել Արշակ 2-րդը.

1) 338-350 թթ.
2) 350-368 թթ.
3) 370-374 թթ.
4) 330-338 թթ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել հայերի առաջին ընդվզումն արաբական տիրապետության դեմ.

1) 642 թ.
2) 774 թ.
3) 703 թ.
4) 650 թ.

4 Ե՞րբ է հիմնադրվել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը.

1) 1562 թ.
2) 1567 թ.
3) 1441 թ.
4) 1461 թ.

5 Ե՞րբ է կնքվել Էրզրումի պայմանագիրը, որով Թուրքիան վերստին ճանաչեց Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում.

1) 1736 թ.
2) 1711 թ.
3) 1701 թ.
4) 1715 թ.

6 Ե՞րբ է կնքվել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը.

1) 1917 թ. փետրվարի 27-ին
2) 1918 թ. մարտի 3-ին
3) 1918 թ. մայիսի 28-ին
4) 1917 թ. հոկտեմբերի 24-ին

7 Ե՞րբ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն երկիրը հռչակեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն.

1) 1920 թ. հոկտեմբերի 14-ին
2) 1920 թ. դեկտեմբերի 10-ին
3) 1920 թ. նոյեմբերի 29-ին
4) 1920 թ. սեպտեմբերի 28-ին

79 Համապատասխանեցնել մշակութային իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Մշակութային իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի ստեղծումը	1	1922 թ.	1	Երվանդ Քոչար
2	Դրամատիկական թատրոնի հիմնումը	2	1931 թ.	2	Սերգեյ Մերկուրով
3	Հայկական առաջին հնչյունային «Պեպո» կինոնկարի բեմադրումը	3	1938 թ.	3	Հրաչյա Ղափլանյան
4	Երևանում Ստ. Շահումյանի մոնումենտի ստեղծումը	4	1963 թ.	4	Համո Բեկնազարյան
		5	1935 թ.	5	Թաթուլ Ալթունյան

1)

1	3	4
2	1	3
3	5	5
4	4	2

2)

1	3	5
2	4	4
3	5	3
4	2	1

3)

1	3	5
2	1	3
3	5	4
4	2	2

4)

1	3	5
2	4	3
3	5	4
4	2	2

80 Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը, վայրը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը	N	Վայրը
1	Հայկական համատեղ պահանջների ներկայացվելը խաղաղության կոնֆերանսին	1	1918 թ. մարտի 1	1	Ե. Գեգեչկորի	1	Երևան
2	Թուրք-անդրկովկասյան բանակցությունների սկիզբը	2	1917 թ. մայիս	2	Ա. Ահարոնյան	2	Փարիզ
3	Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը	3	1919 թ. փետրվար	3	Ա. Չխենկելի	3	Տրապիզոն
4	Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը	4	1917 թ. նոյեմբերի 15	4	Վ. Փափազյան	4	Թիֆլիս

1)

1	2	4	3
2	4	3	2
3	1	1	1
4	3	2	4

2)

1	3	2	2
2	1	3	3
3	4	1	4
4	2	4	1

3)

1	3	2	2
2	1	1	3
3	4	3	4
4	2	4	1

4)

1	3	4	2
2	1	1	3
3	4	3	4
4	2	2	1

8 Ե՞րբ է ազատագրվել Շուշին.

1) 1992 թ. մայիսի 9-ին
2) 1990 թ. մայիսի 20-ին
3) 1993 թ. հունվարի 28-ին
4) 1991 թ. մարտի 18-ին

9 Որտեղի՞ց է սկիզբ առնում Արաքս գետը.

1) Արագածից
2) Սևանա լճից
3) Բյուրակն լեռներից
4) Հայկական պարից

10 Վաղ միջնադարում նախարարական ո՞ր տոհմին էր պատկանում արքունի թիկնապահություն (մաղխազություն) գործակալությունը.

1) Գնունիներին
2) Խորխոռունիներին
3) Բագրատունիներին
4) Ամատունիներին

11 Ո՞ր թագուհին է հիմնել Սանահինի և Հաղպատի վանքերը.

1) Կատրամիդե
2) Փառանձեմ
3) Թամար
4) Խոսրովանույշ

12 Միջնադարյան Հայաստանի վաճառաշահ ո՞ր քաղաքն էր բաց (առանց միջնաբերդի և արտաքին պարսպի) քաղաք.

1) Արծնը
2) Դվինը
3) Կարսը
4) Անին

13 Ո՞վ է հիմք դրել հայկական օպերային արվեստին.

1) Արամ Խաչատրյանը
2) Առնո Բաբաջանյանը
3) Կոմիտասը
4) Տիգրան Չուխաջյանը

14 Ո՞վ է գլխավորել Առաքելոց վանքի կռիվները.

1) Արաբոն
2) Աղբյուր Սերոբը
3) Անդրանիկը
4) Սեբաստացի Մուրադը

15 Ո՞վ էր գլխավորում 1919 թ. Հայաստան ժամանած ԱՄՆ-ի պատվիրակությունը.

1) Լլոյդ Ջորջը
2) Ֆրիտյոֆ Նանսենը
3) Յոհաննես Լեփսիուսը
4) Ջեյմս Հարբորդը

16 Նշված ֆիլմերից որի՞ ռեժիսորն է Հ. Մալյանը.

1) «Եռանկյունի»
2) «Նամուս»
3) «Բարև, ես եմ»
4) «Նռան գույնը»

17 Հին Հայաստանում ինչպե՞ս են կոչվել պետության սահմաններում գտնվող մեծածավալ նահանգները.

1) սատրապություններ
2) ստրատեգիաներ
3) բդեշխություններ
4) քուստակներ

18 Ո՞րն է «աթաբեկ» տերմինի բացատրությունը.

1) արքունի թիկնապահ գնդի հրամանատար
2) ազնվական Կիլիկյան Հայաստանում
3) բանակի պարենի մատակարար
4) թագաժառանգի խնամակալ

19 Նախնադարյան հասարակության շրջափուլերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) նեոլիթ
բ) էնեոլիթ
գ) պալեոլիթ
դ) մեզոլիթ

1) դ, բ, գ, ա
2) գ, դ, բ, ա
3) գ, դ, ա, բ
4) դ, գ, բ, ա

20 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Վասպուրականի թագավորության հանձնվելը Բյուզանդիային:
բ) Արաբ ամիրա Մամլանի հարձակվելը Հայաստանի և Վրաստանի վրա:
գ) Սյունիքի թագավորության հիմնումը:
դ) Տայքի միացվելը Բյուզանդիային:

1) դ, բ, ա, գ
2) գ, բ, ա, դ
3) դ, բ, գ, ա
4) գ, բ, դ, ա

76 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Գևորգ 5-րդ կաթողիկոսի կողմից ցարի առջև Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն իրականացնելու հարցի բարձրացումը:
բ) Երիտթուրքական հեղաշրջումը Թուրքիայում:
գ) Հայ-թաթարական առաջին ընդհարումները Բաքվում:
դ) Պարենհարկի մասին որոշման ընդունումը Հայաստանում:
ե) Գևորգ Չավուշի վիրավորվելը և մահը:
զ) Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը:
է) Վեստենենկի և Հոֆի նշանակվելը Արևմտյան Հայաստանի նահանգապետեր:
ը) Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի ընդունումը:
թ) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունումը:
ժ) Լոնդոնի կոնֆերանսի որոշումը հայկական ազգային օջախ ստեղծելու մասին:

1) ը, գ, ե, բ, ա, է, թ, զ, ժ, դ
2) գ, ը, ե, ա, թ, բ, զ, է, դ, ժ
3) գ, ը, ե, բ, է, ա, զ, թ, ժ, դ
4) ը, ե, գ, ա, բ, է, թ, դ, զ, ժ

77 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Նրանք առաջինն էին, որ իրենց ձեռքով հայացված եկեղեցու համար հայերեն երգեր գրեցին ու երգեցին: Ավանդությունը հակաճե հանվանե ցույց է տալիս, թե որոնք են .... և ... հեղինակած շարականները: Նրանց սկսածը շարունակեցին նրանց աշակերտները, այնպես որ Ոսկեդարը հանձնեց իր հաջորդ դարերին հոգևոր բանաստեղծությունների մի մեծ շարք»:

Ո՞ւմ մասին են պատմաբան Լեոյի վերը բերված խոսքերը.

1) Մեսրոպ Մաշտոցի և Կոմիտաս կաթողիկոսի
2) Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի
3) Մովսես Խորենացու և Սահակ Պարթևի
4) Մովսես Խորենացու և Մեսրոպ Մաշտոցի

78 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Տրոցկիստները և այլ հակակուսակցական տարրերը Հայաստանի կուսակցական ղեկավարության կողմից անհրաժեշտ հակահարված չեն ստանում: ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը չեն կարող թույլ տալ, որ հայ ժողովրդի թշնամիները ազատորեն թրև գան Հայաստանում, վնաս հասցնեն ժողովրդական տնտեսությանը և կեղեքեն գյուղացիությանն ու բանվոր դասակարգին»:

Ի՞նչ դեպքի հետ է կապված Ի. Ստալինի վերը բերված նամակը ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյին.

1) Ս. Տեր-Գաբրիելյանի մահվան
2) Ս. Կիրովի սպանության
3) Վ. Լենինի մահվան
4) կոլեկտիվացման քաղաքականության ձախողման

73 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում 16-17-րդ դարերի թուրք-պարսկական պատերազմների հետևանքները Հայաստանի համար.

ա) Հայ խոշոր իշխաններն իրենց տիրույթները պահպանելու համար ստիպված ընդունեցին մահմեդականություն:
բ) Հայ բնակչության մի մասը մահացավ սովից ու համաճարակներից, մի մասն էլ գերեվարվեց և ստրկության վաճառվեց:
գ) Հայաստան թափանցեցին թուրքական ու քրդական ցեղեր, որոնք բնակվեցին երկրի բարեբեր երկրամասերում:
դ) Հայկական փոքրիկ թագավորությունները դադարեցին գոյություն ունենալ:
ե) Ավերվեցին երկրի քաղաքներն ու գյուղերը, քայքայվեց տնտեսությունը:
զ) Հայ առևտրականները պահպանեցին Պարսկաստանի մետաքսի առևտրի մենաշնորհը:
է) Հայաստանից սկսվեց զանգվածային գաղթ դեպի Հնդկաստան և Ամերիկա:

1) ա, դ, է
2) բ, գ, զ
3) գ, դ, ե
4) բ, գ, ե

74 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Արևելյան Հայաստանում ռուսական տիրապետության հաստատման դրական հետևանքները հայ ժողովրդի համար:
Դրա հետևանքով հայ ժողովուրդը...

ա) ստացավ ինքնավարություն:
բ) մեկընդմիշտ ազատագրվեց պարսկա-թուրքական դարավոր լծից:
գ) ազատություն ձեռք բերեց:
դ) ձեռք բերեց ազգահավաքման ու գոյատևման հաստատուն և ապահով կենտրոն:
ե) ազատվեց ազգային-գաղութային ճնշումներից:
զ) ստացավ տնտեսական և մշակութային զարգացման ավելի տանելի պայմաններ:
է) ստացավ կյանքի և գույքի ապահովություն:

1) դ, զ, է
2) ա, բ, գ
3) գ, դ, ե
4) ե, զ, է

75 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Մխիթարյան միաբանության հիմնումը:
բ) Հովհաննավանքի դպրոցի հիմնադրումը:
գ) Աբգար դպիր Թոխատեցու ղեկավարած պատվիրակության մեկնումը Վենետիկ:
դ) Հայկական տպարանի հիմնումը Մադրասում:
ե) Շահ Աբասի իրականացրած հայ բնակչության բռնագաղթը:
զ) Իսրայել Օրու գլխավորած ռուսական դեսպանության ժամանումը Սպահան:
է) Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերության և Ռուսաստանի միջև պայմանագրի կնքումը:
ը) Դավիթ Բեկի մահը:
թ) Հովսեփ Էմինի Հնդկաստանից Անգլիա ուղևորվելը:
ժ) Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը:

1) ե, գ, ժ, բ, զ, է, ա, դ, ը, թ
2) ժ, ե, բ, գ, է, ա, զ, ը, դ, թ
3) գ, ժ, ե, է, զ, ա, բ, թ, ը, դ
4) ժ, գ, ե, բ, է, զ, ա, ը, թ, դ

21 Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Հալիձորի
բ) Օշականի
գ) Չավնդուրի
դ) Շամխորի

1) ա, գ, դ, բ
2) ա, դ, բ, գ
3) գ, ա, դ, բ
4) գ, ա, բ, դ

22 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Լազր Չափչախյանին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվելը:
բ) Ի. Ստալինի մահը:
գ) Ներսես Ստեփանյանի նկատմամբ շինծու գործի ստեղծումը և զանգվածային ձերբակալությունները Հայաստանում:
դ) ԽՄԿԿ 20-րդ համագումարը:

1) գ, ա, բ, դ
2) գ, ա, դ, բ
3) բ, ա, դ, գ
4) բ, ա, գ, դ

23 Ե՞րբ է տեղի ունեցել Խառանի ճակատամարտը.

1) Ք. ա. 34 թ.
2) Ք. ա. 53 թ.
3) Ք. ա. 40 թ.
4) Ք. ա. 36 թ.

24 Ե՞րբ Բյուզանդիայի հայազգի Վասիլ 1-ին կայսրը Աշոտ Բագրատունուց թագ խնդրեց.

1) 908 թ.
2) 890 թ.
3) 876 թ.
4) 885 թ.

25 Ե՞րբ է կազմավորվել հայ կամավորների Արարատյան զորամիավորումը.

1) 1918 թ. հոկտեմբերին
2) 1917 թ. դեկտեմբերին
3) 1916 թ. փետրվարին
4) 1915 թ. ապրիլին

26 Ե՞րբ է կազմակերպվել Հայաստանի կերպարվեստի թանգարանը (Հայաստանի ազգային պատկերասրահը).

1) 1935 թ.
2) 1941 թ.
3) 1915 թ.
4) 1965 թ.

27 Որքա՞ն է տևել հելլենիստական դարաշրջանը Հայաստանում.

1) 100 տարի
2) 600 տարի
3) երեք դար
4) երկու դար

28 Ինչպե՞ս է կոչվում Մխիթար Հերացու աշխատությունը.

1) «Գիրք դատաստանի»
2) «Բնության մասին»
3) «Աշխարհացույց»
4) «Ջերմաց մխիթարություն»

29 Ո՞վ էր Զեյթունի 1895 թ. ապստամբության իրական ղեկավարը.

1) Մարկոս Թաշճյանը
2) Նազարեթ Չավուշը
3) Սիմոն Զավարյանը
4) Կայծակ Առաքելը

30 Ո՞վ էր Բյուրո-կառավարության նախարարապետը.

1) Համազասպ Օհանջանյանը
2) Սիմոն Վրացյանը
3) Հովհաննես Քաջազնունին
4) Ալեքսանդր Խատիսյանը

31 Ինչպե՞ս էր կոչվում Հայկական մարզի կառավարումն իրականացնող մարմինը.

1) մարզային կոմիտե
2) նահանգական վարչություն
3) մարզային վարչություն
4) գավառական վարչություն

32 Ինչպե՞ս էր կոչվում Ղարաբաղյան շարժումը Հայաստանում և Արցախում կոորդինացնելու նպատակով Իգոր Մուրադյանի գլխավորությամբ ստեղծված կառույցը.

1) Հայոց համազգային շարժում
2) Կազմկոմիտե
3) Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե
4) Ղարաբաղ կոմիտե

33 Ինչո՞ւ Մլեհը դարձավ հայ իշխանների և հոգևորականության կազմակերպած դավադրության զոհը:
Որովհետև նա…

1) փորձեց թուլացնել հայ եկեղեցու տնտեսական հզորությունը:
2) Միջերկրականի ծովեզերքը բյուզանդացիներից և խաչակիրներից մաքրելու համար դաշնակցեց մահմեդական ամիրայությունների հետ:
3) փորձեց հայոց եկեղեցին ենթարկել կաթոլիկ եկեղեցուն:
4) հայ ավագանուն պարտադրեց բնակվել նոր մայրաքաղաք Սիսում:

71 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Ազգային խորհուրդ
2. ՕՄՕՆ
3. Արտակարգ հանձնաժողով
4. Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)
5. ԵԱՀԽ

ա) Արցախյան պատերազմի ժամանակ ԼՂՀ-ում գործող պետական մարմին, որի ձեռքում էր կենտրոնացված ամբողջ գործադիր իշխանությունը
բ) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ստեղծված մարմին, որի վրա դրվեց ԼՂԻՄ-ը կառավարելու խնդիրը
գ) ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների համագումարում մարզը կառավարելու համար ընտրված մարմին
դ) 1920-ական թվականներին ԽՍՀՄ-ում գործող իրավապահ մարմին
ե) ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատներ
զ) միջազգային կառույց, որը ներգրավված է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործում

1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-ե
2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-զ
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-դ

72 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրի հետևանքները Հայաստանի համար.

ա) Հայաստանի քաղաքական անջատվածությունն ավելի խորացավ:
բ) Պարսիկները պարտավորվեցին իրենց զորքերը դուրս բերել Հայաստանից:
գ) Հայաստանի տարածքի մեծ մասն անցավ Պարսկաստանին:
դ) Բյուզանդիան էապես ընդլայնեց իր սահմանները Հայաստանում:
ե) Դժվարացան Հայաստանի տարբեր շրջանների միջև տնտեսական կապերը:
զ) Բյուզանդիան պարտավորվեց այսուհետ չխառնվել Հայաստանի գործերին:
է) Հայաստանը ստացավ լիակատար անկախություն:

1) ա, գ, զ
2) բ, դ, ե
3) ա, դ, ե
4) բ, զ, է

69 Պայմաններից ընտրել չորսը, որոնք ճիշտ են ներկայացնում Մոսկվայի ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության մասին պայմանագիրը.

ա) Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը:
բ) Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները թուրքաբնակ բոլոր վայրերում:
գ) Սահմանափակվում էին Հայաստանի զինված ուժերը:
դ) Հայաստանի երկաթուղիների վերահսկողությունն անցնում էր Թուրքիային:
ե) Թուրքական զորքերը նահանջելու էին մինչև 1914 թ. սահմանները:
զ) Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանն անցնում էր Ախուրյան և Արաքս գետերի հունով:
է) Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ, որը չէր զիջվելու երրորդ պետության:

1) ա, գ, դ, ե
2) ա, գ, դ, է
3) բ, գ, դ, զ,
4) ա, բ, զ, է

70 Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. ձիավոր
2. հեծելազոր
3. պահեստազոր
4. աշխարհազոր

ա) հայոց արքայի թիկնապահ հեծելագունդը, որի գլխավոր խնդիրը թագավորի և արքունիքի անվտանգությունը պահպանելն էր
բ) կոչում Կիլիկյան բանակում, որը գլխավորապես տրվում էր ազնվականներին և այն կրողներն իրենց հանդերձանքով և սպառազինությամբ հիշեցնում էին արևմտաեվրոպական ասպետներին
գ) պատերազմի ժամանակ ժողովրդից հավաքագրված լրացուցիչ զորքը, որն առաջնորդում էին գավառների կառավարիչները
դ) հայկական զորքի գլխավոր հարվածող ուժը
ե) զորքի այն մասը, որն ի սկզբանե չէր մասնակցում ճակատամարտին և տեղ էր զբաղեցնում բանակի թիկունքում

1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ
2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-ե
3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ
4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե

34 Ինչո՞ւ 1909 թ. Կիլիկիայի հայության ջարդերի ընթացքում Մարաշում թուրքերը բռնություններ չկիրառեցին:
Որովհետև…

1) դեպքերին միջամտեցին տերությունների Կ. Պոլսի դեսպանները:
2) մարաշցիները դիմեցին Ֆրանսիայի օգնությանը:
3) թուրքերը երկյուղեցին զեյթունցիների պատասխան հարձակումից:
4) կառավարությունը ջարդերը դադարեցնելու հրաման տվեց:

35 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Անգեղակոթի գաղտնի խորհրդակցության հրավիրումը:
բ) Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի կողմից գաղտնի խորհրդակցության հրավիրումը:
գ) Նոր Ջուղայում հայկական տպարանի ստեղծումը:
դ) Հայկական տպարանի հիմնումը Մադրասում:
ե) Մահտեսի Մուրադի պատվիրակության Փարիզ ուղարկվելը:

1) ա, գ, բ, դ, ե
2) բ, գ, ե, ա, դ
3) բ, գ, ա, ե, դ
4) գ, ա, բ, դ, ե

36 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Պաշտպան Հայրենյաց կազմակերպության հիմնադրումը:
բ) Ազիզ փաշայի կողմից Զեյթունի պաշարումը:
գ) Դաշնակցություն կուսակցության «Մանիֆեստի» հրատարակումը:
դ) Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը:
ե) Արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատումը սուլթանական կառավարության կողմից:

1) բ, ե, դ, ա, գ
2) բ, ե, գ, դ, ա
3) գ, բ, դ, ե, ա
4) դ, բ, ե, ա, գ

37 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Այս թող լինի հաշտության ուխտ իմ և ձեր մեջ՝ որքան ժամանակ որ դուք կամենաք: Երեք տարի ես ձեզանից հարկ չեմ առնելու, իսկ հետո հարկ կտաք ձեր երդման համաձայն, որքան դուք կամենաք…»:

Ո՞վ է վերը բերված խոսքերի հեղինակը.

1) Մանգու խանը
2) Նադիր շահը
3) Շահ Աբասը
4) Մուավիան

38 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց»:

Ո՞ր պայմանագրից է վերը բերված մեջբերումը.

1) Բրեստ-Լիտովսկի
2) Բաթումի
3) Մոսկվայի
4) Բեռլինի

39 Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.

1. Զաքարիա կաթողիկոսի եղբորորդի Սմբատի օծվելը հայոց թագավոր
2. Մակուի (Արտազի) հայոց իշխանության վերացումը
3. Լվովի հայկական տաճարի կառուցումը
4. Հայաստանի երկրորդ բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև

ա) 1639 թ.
բ) 1555 թ.
գ) 1465 թ.
դ) 1426 թ.
ե) 1363 թ.

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա

40 Հայ պարբերականները համապատասխանեցնել դրանց հրատարակության վայրերի հետ.

ա) «Բազմավեպ»	1) Թիֆլիս
բ) «Ազգասեր»	2) Վենետիկ
գ) «Լրո գիր»	3) Կ.Պոլիս
դ) «Արարատ»	4) Զմյուռնիա
	5) Կալկաթա

1) ա-2, բ-5, գ-4, դ-3
2) ա-2, բ-5, գ-3, դ-1
3) ա-1, բ-4, գ-2, դ-3
4) ա-1, բ-4, գ-5, դ-2

66 Կատարել համապատասխանեցում.

1. Համամլու	ա) Արմավիր
2. Ղուրդուղուլի	բ) Ալաշկերտ
3. Էլար	գ) Արշալույս
4. Վաղարշակերտ	դ) Արտաշատ
5. Ղամարլու	ե) Կոտայք
6. Քյորփալու	զ) Սպիտակ
	է) Արարատ

1) 1-ե, 2-գ, 3-զ, 4-ա, 5-դ, 6-բ
2) 1-գ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-է, 6-բ
3) 1-զ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-դ, 6-գ
4) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-է, 6-գ

67 Կատարել համապատասխանեցում.

1. Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը	ա) Լ. Շանթ
2. Կիլիկիան «ինքնավար հանրապետություն» հռչակելը	բ) Սեպուհ
3. Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը	գ) Դրո
4. Բոլշևիկների ապստամբության ճնշումն Ալեքսանդրապոլում	դ) Մ. Տամատյան
5. Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում	ե) Ա. Ահարոնյան
6. Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը	զ) Ս. Վրացյան
	է) Ալ. Խատիսյան

1) 1-զ, 2-դ, 3-է, 4-բ, 5-ա, 6-գ
2) 1-դ, 2-ա, 3-է, 4-բ, 5-ե, 6-գ
3) 1-զ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-է, 6-ա
4) 1-դ, 2-ե, 3-զ, 4-գ, 5-ա, 6-է

68 Պայմաններից ընտրել չորսը, որոնք ճիշտ են ներկայացնում Շահամիր Շահամիրյանի կազմած հայ-ռուսական դաշնագրի նախագիծը.

ա) Կառավարությունը գլխավորելու էր հայազգի նախարարը:
բ) Երկու երկրների միջև սահմանվելու էր ազատ երթևեկություն:
գ) Հայաստանում պետք է լիներ չափավոր քանակի ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար:
դ) Ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով:
ե) 6000-անոց ռուսական զորքը 20 տարի մնալու էր Հայաստանում:
զ) Հայոց թագավորի ընտրությունը կատարելու էր ռուսաց կայսրը, որն այնուհետև պետք է օծվեր էջմիածնում:
է) Արցախի մելիքներից մեկը դառնալու էր Հայաստանի թագավոր:

1) ա, բ, գ, դ
2) ա, բ, դ, ե
3) բ, ե, զ, է
4) ա, գ, զ, է

62 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«…Բայց չարագործ Մեհրուժանը ձիու վիրավորված լինելու պատճառով չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ, հայոց Սմբատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եկող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգովիտի եղեգնուտի ափին...»:

Ո՞ր ճակատամարտի մասին է պատմիչի վկայությունը.

1) Ակոռիի
2) Ճարմանայի
3) Խաղխաղի
4) Ձիրավի

63 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Զաքարեն վրաց թագավորին ենթակա վրաց ու հայոց զորքերի զորավարն էր, իսկ Իվանեն ուներ աթաբեկության տիտղոս: Սրանք բազմաթիվ հերոսական մարտեր մղեցին, որովհետև պարսիկների ու տաճիկների կողմից գրավված հայոց շատ երկրներ խլեցին նրանցից…»:

Ո՞ր պատմիչն է թողել վերը բերված վկայությունը.

1) Կիրակոս Գանձակեցին
2) Ստեփանոս Շահումյանը
3) Ագաթանգեղոսը
4) Թովմա Արծրունին

64 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Բոլորը զենքը ձեռքին շտապում են ….., այնտեղից առաջ: Ձոկատները գնում են երկար ժամանակի համար վերցված իրենց պարենով: Ոգևորությունն աննախադեպ է»:

Ո՞ւմ է ուղղված Արամ Մանուկյանի վերը բերված հեռագիրը.

1) Դանիել Բեկ Փիրումյանին
2) Թովմաս Նազարբեկյանին
3) Մովսես Սիլիկյանին
4) Դրաստամատ Կանայանին

65 Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ.

1. Աշոտ 3-րդ	ա) Տաշիր-Ձորագետի թագավորության հիմնադրումը
2. Աշոտ 2-րդ	բ) Գառնիի տաճարի կառուցումը
3. Տրդատ 1-ին	գ) Անին մայրաքաղաք հռչակելը:
4. Գուրգեն Բագրատունի	դ) Հայ Արշակունիների ժառանգական դինաստիայի սկզբնավորումը
5. Խոսրով 1-ին	ե) Արծնիի ճակատամարտը
6. Սմբատ Բագրատունի	զ) Կարսի թագավորության հիմնադրումը
	է) Բյուզանդիայի հետ հակաարաբական դաշինքի կնքումը

1) 1-է, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ, 6-ե
2) 1-է, 2-զ, 3-դ, 4-ե, 5-բ, 6-ա
3) 1-զ, 2-գ, 3-է, 4-ե, 5-դ, 6-ա
4) 1-գ, 2-է, 3-բ, 4-ա, 5-դ, 6-ե

41 Նշված պնդումներից որո՞նք են սխալ.

ա) Տիգրան 1-ինը Մեծ Հայքին է միացրել Ծոփքը:
բ) Տիգրան 2-րդի զորքերը գրավել են Կորդուքը, Ադիաբենեն, Օսրոյենը և Փոքր Հայքը:
գ) Արևմուտքում Արտաշես 1-ինը Մեծ Հայքին է միացրել Կարինը և Դերջանը:
դ) Տիգրան Երվանդյանի օրոք հայկական թագավորության սահմանները ձգվել են Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան:
ե) Երվանդունիների օրոք հայկական թագավորության սահմանները հարավ-արևելքում հասել են Մեդիային:

1) բ, դ, ե
2) բ, գ, դ
3) ա, գ, դ
4) ա, բ, դ

42 Գագիկ 1-ինը նշված գավառներից ո՞րն է խլել Վասպուրականից և միացրել Բագրատունիների թագավորությանը.

1) Կոգովիտը
2) Տարոնը
3) Մանանաղը
4) Սասունը

43 Մոնղոլներն ինչո՞ւ էին վստահ, որ Հայաստանում կազմակերպված դիմադրության չեն հանդիպելու:
Որովհետև…

1) Հայաստանում մնացել էին միայն նրանց հավատարիմ հայ ազնվականները:
2) հայոց այրուձին մեկնել էր Եգիպտոս պատերազմի:
3) իշխաններից յուրաքանչյուրը քաշվել էր իր տոհմական ամրոցը և մտածում էր միայն սեփական կալվածքների պաշտպանության մասին:
4) հայ իշխանները մեկնել էին Վրաստան հակամոնղոլական դաշինք կնքելու:

44 Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ազգային սահմանադրության ընդունումն արևմտահայ իրականության համար.

1) Կղերաամիրայական խավերը որոշ չափով զրկվեցին ազգային գործերը մենաշնորհ կառավարելու իրավունքից:
2) Արևմտահայերը ստացան անձի ու գույքի ապահովություն:
3) Պոլսահայ համայնքը ստացավ քաղաքական լայն ազատություններ:
4) Որոշ չափով նվազեցին քուրդ աղաների հարստահարությունները:

45 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Երվանդաշատի կառուցումը:
բ) Վահան Ամատունու հեռացվելը հազարապետությունից:
գ) Դվինի կառուցումը:
դ) Մծբինի հաշտության պայմանագրի կնքումը:
ե) Վաղարշապատի կառուցումը:

1) ա, ե, դ, գ, բ
2) ա, ե, գ, բ, դ
3) բ, ա, դ, գ, ե
4) բ, ա, գ, ե, դ

46 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Լոզանի կոնֆերանսի սկիզբը:
բ) Խորհրդային Հայաստանի տնտեսության հասնելը նախապատերազմյան 1913 թ. մակարդակին:
գ) Դաշնակցության ինքնավերացման համագումարը:
դ) Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը:
ե) Հայաստանի Ռազմհեղկոմի վերակառուցվելը Ժողովրդական կոմիսարների խորհրդի:

1) ե, դ, գ, բ, ա
2) դ, ե, գ, բ, ա
3) դ, ե, գ, ա, բ
4) ե, դ, ա, գ, բ

47 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.
«Երբ Մանգու մեծ խանը թագավորեց, մեծ թագավորահայր և զորավար Բաթուն, որն անթիվ բազմությամբ բանակել էր հյուսիսի կողմերում՝ Իթիլ (Վոլգա) կոչվող մեծ ու անհուն գետի ափին, որը թափվում է Կասպից ծովը, պատվիրակ ուղարկեց Հեթում թագավորի մոտ, որ գա իրեն ու Մանգու խանին տեսնելու…»

Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը.

1) Ղազար Փարպեցին
2) Կիրակոս Գանձակեցին
3) Սեբեոսը
4) Եսայի Հասան-Ջալալյանը

48 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Ամբողջ Ռուսաստանը, ամբողջ աշխարհը սարսափից երերաց, իմանալով (1905 թ.) փետրվարի 6-9-ին Բաքվում տեղի ունեցած դեպքերը: Ռուսաստանը փնտրում է և չի կարող գտնել դժբախտության պատճառը: Ով որ ճանաչում է նրա հեղինակին, պարտավոր է ցույց տալ բացարձակապես: Ապա թե ոչ, նա ինքը կդառնա հանցավորին թաքցնող: Ես ճանաչում եմ հանցավորին և սրբազան պարտք եմ համարում տալ նրա անունը: Կոտորածի հեղինակը դուք եք…»:

Ո՞ւմ էին ուղղված Բաքվի նախկին քաղաքագլուխ Նովիկովի նամակի վերը բերված տողերը.

1) Նիկոլայ 2-րդ ցարին
2) Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինին
3) Բաքվի նահանգապետ Մ. Նակաշիձեին
4) Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին

59 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Կիլիկյան գահի հանձնումը Լուսինյան տոհմին:
բ) Ռուբինյան իշխանության հիմնադրումը:
գ) Մոնղոլների դեմ Դավիթ 7-րդի գլխավորած հայ-վրացական ապստամբությունը:
դ) Անիի վերջնական ազատագրումը հայ-վրացական զորքերի կողմից:
ե) Լևոն 2-րդի մահը:
զ) Հեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկիայում:

1) դ, բ, ե, զ, գ, ա
2) բ, ե, զ, դ, գ, ա
3) բ, դ, ե, զ, գ, ա
4) բ, ե, դ, գ, ա, զ

60 Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.

ա) Ռուսական բանակի կողմից Երևանի բերդի երկրորդ պաշարումը:
բ) Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը:
գ) Դեհկարխանի հաշտության բանակցությունները:
դ) Հայկական մարզի, որպես առանձին վարչական միավորի, վերացվելը:
ե) Ռուսական զորքերի կողմից գեներալ Ն. Մուրավյովի հրամանատարությամբ Կարսի գրավումը:
զ) Եկեղեցական կանոնադրության ընդունումը:

1) ե
2) զ
3) բ
4) դ

61 Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.

ա) Հայկական 76-րդ հրաձգային դիվիզիայի կազմավորումը:
բ) Հայաստանի գրողների միասնական միության ստեղծումը:
գ) Կարսի Անդրկովկաս-Թուրքիա կոնֆերանսը:
դ) Թաթուլ Ալթունյանի կողմից Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի ստեղծումը:
ե) Հայկական 89-րդ ազգային դիվիզիայի կազմավորումը:
զ) ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ստեղծումը:

1) ա, զ
2) բ, գ
3) գ, զ
4) ա, ե

56 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Մանազկերտի ճակատամարտի հետևանքները.

ա) Ամբողջ Հայաստանը մտավ սելջուկների հսկայածավալ սուլթանության սահմանների մեջ:
բ) Տաշիր-Ջորագետի, Վանանդի ու Սյունիքի թագավորությունները հպատակություն հայտնեցին սելջուկ-թուրքերին և փրկվեցին ավերիչ արշավանքներից:
գ) Հաղթանակ տանելով, սելջուկները հսկայական ավարով և գերիներով վերադարձան Ատրպատական:
դ) Բյուզանդիայի կողմից մինչ այդ նվաճված հայկական երկրամասերը լիովին վերականգնեցին իրենց անկախությունը:
ե) Բյուզանդացիները հսկայական կորուստներ կրեցին, իսկ կայսրը գերի ընկավ:
զ) Բյուզանդացիները շուտով ընդունեցին իրենց պարտությունը և հաշտություն կնքեցին սելջուկ-թուրքերի հետ:

1) ա, գ, ե
2) բ, դ, զ
3) ա, ե, զ
4) բ, գ, դ

57 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանքները.

ա) Ձևավորվեց գյուղական մտավորականության խավ:
բ) Մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության:
գ) Շուրջ 40 հազար գյուղաբնակներ մնացին հողազուրկ:
դ) Աշխուժացան ապրանքադրամական-շուկայական հարաբերությունները:
ե) Գյուղացիության մի մասը համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը:
զ) Կոլտնտեսությունները լիովին բավարարեցին բնակչության պարենի պահանջները:

1) գ, դ, ե
2) ա, ե, զ
3) ա, բ, ե
4) բ, դ, զ

58 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Արտաշես 2-րդի սպանությունը:
բ) Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրավվելը և հրի մատնվելը:
գ) Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը:
դ) Բագարան քաղաք սրբավայրի կառուցումը:
ե) Տիգրանակերտի ճակատամարտը:
զ) Հայ-պոնտական դաշինքի կնքումը:

1) բ, գ, դ, ե, զ, ա
2) բ, դ, գ, զ, ե, ա
3) դ, գ, բ, զ, ա, ե
4) դ, բ, գ, զ, ա, ե

49 Կատարել համապատասխանեցում.

1. Պավլիկյան առաջին խոշոր համայնքի հիմնումը Փոքր Հայքում	ա) Տրդատ
2. Մծուրք քաղաքի հիմնադրումը	բ) Կոմիտաս կաթողիկոս
3. Հռիփսիմեի տաճարի կառուցումը	գ) Ներսես կաթողիկոս
4. Անիի մայր տաճարի կառուցումը	դ) Կոստանդին
	ե) Սանատրուկ

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

50 Կատարել համապատասխանեցում.

1. Ա. Խանփերյանց
2. Հ. Բաղրամյան
3. Ն. Սաֆարյան
4. Հ. Բաբաջանյան

ա) ազգային դիվիզիայի հրամանատար
բ) զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ
գ) Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի հրամանատար
դ) ավիացիայի մարշալ
ե) ԽՍՀՄ նավատորմի ծովակալ

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա

51 Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ.

1) Վանի թագավորության հիմնական արտադրող ուժը երկրագործ ու անասնապահ բնակչությունն էր:
2) Մասիս և Արագած լեռների միջև՝ Արաքսի միջին հոսանքում փռված է Արարատյան դաշտը:
3) Մեզոլիթում արտաքին վտանգի ազդեցության ներքո ցեղերը միավորվեցին ցեղային միությունների մեջ:
4) Մենուան նվաճել է Ուրմե, Արխի, Ծուփա և Մելիդ հայկական իշխանությունները:

52 Ի՞նչ էր նախատեսվում թուրքական կառավարության հրապարակած թանզիմաթով.
Դրանով…

1) սահմանափակվելու էր սուլթանի իշխանությունը:
2) Թուրքիայում անցկացվելու էին ընտրություններ:
3) Թուրքիայի արևելյան նահանգներում ստեղծվելու էր հայկական ազգային օջախ:
4) բոլոր հպատակներին տրվելու էր կյանքի ու գույքի ապահովություն, հարկերի հավասար բաշխում, դատական գործի բարելավում:

53 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. գեղջավագ
2. բեյ
3. պարոնտեր
4. բեկ

ա) սանջակի կառավարիչ
բ) բեկլարբեկության կառավարիչ
գ) պետական ստորին պաշտոնյա Հին Հայաստանում
դ) մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչ
ե) իր կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատեր

1) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
2) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ
4) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ

54 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) մուհաջիր
2) չերքեզ
3) համիդիե գնդեր
4) ենիչերական զորքեր

ա) Եգիպտոսում մանուկ հասակում մահմեդականություն ընդունած և ռազմական գործի մեջ հմտացած ստրուկ
բ) քրդերից ստեղծված հեծելազորային զորամասեր
գ) Կովկասից Անատոլիա արտագաղթած մահմեդական գաղթական
դ) Բալկաններից Թուրքիա եկած մահմեդական գաղթական
ե) Թուրքիայում մանուկ հասակում բռնի հավաքագրված և դավանափոխ արված քրիստոնյաներից կազմված զորամասեր

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե
3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ

55 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Վարդանանց պատերազմի հետևանքները.

ա) Պարսիկները թեթևացրեցին հարկերը, հաշտվեցին Հայաստանի ներքին ինքնուրույնության հետ:
բ) Հայաստանում սկսեցին պաշտոնների նշանակել ոչ թե ուրացողներին, այլ արժանավոր մարդկանց:
գ) Դվինը դարձավ մարզպանական նստավայր:
դ) Հայրենի երկիր վերադարձավ հայոց այրուձին:
ե) Պարսիկները հրաժարվեցին բռնի կրոնափոխության ծրագրից:
զ) Ներում շնորհվեց ապստամբության ղեկավար նախարարներին և հոգևորականներին:

1) ա, ե, զ
2) ա, դ, ե
3) բ, գ, ե
4) գ, դ, զ